Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

26
Ш-84

2747

280
832-Ш
1860

2010

344
3197

B 2001

344

280
832-Խ.Ա
344

# ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

26
Խ-84 սր.

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ։

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱՅԻՆ Հ. Հ. ԳՐԱԴԱՐԱՆ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՐՈՅՑ ԷՋՄԻԱԾՆԻ Տ.Տ. ՄԱՏԹԷՈՍԻ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ԵՒ ԱՆՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ։

ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՅ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԻՐԻԹԻ ԲԱՐՁՐ ՍՐԲԱԶԱՆ ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱՍՊԵՏԻ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ի ՏՓԽԻՍ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՅԻ ՀԱՅՈՅ ԸՆԾԱՑԵՑԵԼՈՅ ՅԱՋՈՂՈՒԱԿԱՆ ԴԻՈՐԳԱՅ ԱՐԾՐՈՒՆԻՈՅ։

1860 — ՌՅԹ։

Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցւոյ, յորժամ կամիցի քահանայն պատարագ մատուցանել։

Պարտի այսպէս խորհրդաբար զգեստաւորիլ։

Մոցէ յաւանդատունն հանդերձ սարկաւագքն առ զգեստքն են պատարագի։

Եւ զգեցեալ պաշտօնեիցն ըստ իւրաքանչիւր աստիճանի։

Ասացեն ապա՝ Սաղմոս։ Ճշ։ Կ՝ողդ։

Քահանայք քո զգեցցին զարդարութիւն։ և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։ Փսա։

Ցիշեա՛ տէր զդաւթի և զամենայն հեղութիւն նորա։

Որպէս երդուաւ տեառն։ և ուխտեաց զուստուծոյ յակոբայ։

Թե՝ ո՛չ մտից ՝ի յարկս տանս իմոյ։ թէ ելից յանկողնիս մահճաց իմոց։

Թե՝ տայց քուն աչաց իմոց։ կամ նինջ արտեւանաց իմոց։ կամ հանգիստ լերանաց իմոց։ մինչեւ գտից զտեղի յարկի տեառն աստուծոյ յակոբայ։

Ա՛հա լուաք զնմանէ յեփրաթայ։ և գտաք զնա ՝ի դաշտս մայրենեաց։

Մտցուք ՝ի յարկս նորա։ երկիրպագցուք ՝ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա։

Արի՛ տէր ՝ի հանգիստ քո դու և տապանակ կտակի սրբութեան քո։

Երիցունք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն։

Վասն դաւթի սիրելւոյ քո։ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ։

Երդուաւ տէր դաւթի ճշմարտութեամբ և ոչ ստեաց նմա։ ՝ի պտղոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա։

Թե՝ պահեսցեն որդիք քո զբրիսնս իմ և զվկայութիւնս իմ զոր ուսուցից նոցա։

Որդիք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քոյ։

Հաճեցաւ տէր ընդ սիօն։ և ընտրեաց բնակիլ ՝ի նմա։ ասէ այս է՝ հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից։ ՝ի սմա բնակեցայց զի հաճեցայ ընդ սա։

Օրհնելով օրհնեցից։ զաղքատս սորա լցուցից հացիւ։

Երիցանց սորա զգեցուցից փրկութիւն։ և սուրբք սորա ցնծալով ցնծասցեն։

Ընդ ծագեցից եղջիւր ՝ի դաւթի։ պատրաստ արարից զճրագ օծելոյ իմոյ։

Թ՝ը՝

32596-4.4
15927-58

Թշնամեաց սրա զգեցուցից զամոթ. և 'ի վերայ նորա ծաղկեսցի սրբութիւն իմ։

Փառք հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Եւ քարոզեսցէ սարկաւագն։

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ 'ի տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ 'ի վերայ մեր։

Զմեռեալս տէր ատուած մեր, կենդանեսցէ և ողորմեսցի։

Եւ ասասցեն երիտասան Տէր ողորմեայ։

Ո՛վ սրբազան պատարագիչ՝ յիշեա՛ յաղթութիւն քոյ զմատակարարս և զսարկաւագս դորմարանիս։

Եւ զհոգիս ննջեցելոց նոցին 'ի քրիստոս յիսուս։

INRI



Աղօթք առանձնական՝ Պատարագիչ Քահանային յառաջ քան զգեստաւորիլն։

Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ տէր մեր Յիսուս Քրիստոս։ Ընծաւելի խնարհութեամբ յերկրի երեւեցար և ընդ մարդկան շրջեցար։ Որ եղեր քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի և զարդարեցեր զեկեղեցի քո սուրբ։ Տէր ամենակալ որ պարգեւեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ։ Արժանի արա և զիս 'ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո։ Որ համարձակիմ և մերձենամ 'ի նոյն հոգեւոր պաշտօն փառաց քոց։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացայց՝ որ է հանդերձ պղծութեան, և զարդարեցայց լուսով քով։ Ընկեա յինէն զչարիս իմ, և թօթափեա զյանցանս իմ։ Որպէս զի արժանի եղէց հանդերձեալ լուսոյդ առ 'ի քէն։ Շնորհեա՛ ինձ քահանայական փառաւք մատանել 'ի պաշտօն սրբութեանց քոց՝ ընդ այնոսիկ որք անմեղութեամբ պահեցին զպատուիրանս քո։ Զի և ես պատրաստ դառայց երկնաւոր առաջաստիդ ընդ խմաստուն կուսանսն, փառաւորել զքեզ Քրիստոս որ բարձեր զմեղս ամենեցուն։ Զի դու ես սրբութիւն անձանց մերոց և քեզ բարերարիդ աստուծոյ վայելէ փառք իշխա՛ն։

Եւ մատուցեալ սարկաւագունքն՝ զգեցուցցեն նմա զհանդերձսն ասելով. Եւ եւս խաղաղութեան։ Բահանայն՝ Օրհնութիւն։ Եւ յետ օրհնութեանն՝ դիցէ յառաջ զնոյսըն 'ի գլուխն և ասացէ։

Դիր տէր սաղատարտ վրկութեանն 'ի գլուխս իմ, պատերազմիլ ընդ զօրութիւնս թշնամւոյն։ Շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում վայելէ փառք իշխանութիւն և պատիւ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Շապկին։

Զգեցո՛ տէր ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան։ Եւ շուրջ պահեա զգեստովս փրկութեան։ Շնորհօք։

Փոր Ուրարին։

Զգեցո՛ տէր պարանոցի իմոյ զարդարութիւն։ Եւ սրբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք։

Գօտւոյն։

Շուրջ պատեսցէ կամարս հաւատոյ զմէջս սրտի իմոյ և մտացս։ Եւ շինջուսցէ 'ի սոցանէ զկորդիրդս աղտեղիս։ Եւ զօրութիւն շնորհացդ քոց յամենայն ժամ ընակեսցի 'ի սուտ։ Շնորհօք։

Բազպան յաջ ձեռին։

Տո՛ւր տէր զօրութիւն յաջոյ ձեռին իմոյ, և լուա զամենայն աղտեղութիւնս իմ։ Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնորհ։

Բազպան յահեակ ձեռին։

Տո՛ւր տէր զօրութիւն ձախոյ ձեռին իմոյ, և լուա զամենայն աղտեղութիւնս իմ։ Որպէս զի կարող լինիցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ հոգւոյ և մարմնոյ։ Շնորհ։

Վարսին։

Զգեցո՛ տէր պարանոցի իմոյ զարդարութիւն։ Եւ սրբեա զսիրտ իմ յամենայն աղտեղութենէ մեղաց։ Շնորհօք։

Նախորդին որ է շուրջառ։

Տ՚ սղբմութեամբ քով զգեցո՛ ինձ զգեստ պայծառ և պարապեա ընդդէմ ներդործութեան չարին։ Զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անուն։ Շնորհօք։

Յետ զգեստաւորելոյ՝ սրբազան զգեստուքն ասէ։

Ցնծասցէ անձն իմ 'ի տէր զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան։ Իբրեւ փեսայի

վեստայի եղ լինձ պսակ։ և որպէս
զհարսն զարդու զարդարեաց զնս։
Շնորհք։

Թաշկինակին։

Սրբեա՛ տէր զձեռս իմ յամենայն
աղտեղութենէ մեղաց։ Շնորհք։

Եւ յետոյ եկեսցեն առաջի սրբոյ սեղանոյն։
Եւ քահանայն լուասցէ զձեռս ասելով։
Սաղմոս։ Լե։ Կցորդ։

Լուացից սրբութեամբ զձեռս իմ։

Սարկաւագն՝ Փոխ։

Դատ արա՛ լինձ տէր զի ես ամբը-
ծութեան իմոմ գնացի։

Քահանայն։

Եւ վասն սրբուհւոյ աստուածածնի։

Սարկաւագն։

Սուրբ զաստուածածինն և զամ-
նայն սուրբս բարեխօս սրասցուք։

Քահանայն։

Ընկալ տէր զաղաչանս մեր։ Խոս-
տովանիմ առաջի աստուծոյ և սրբ-
բուհւոյ աստուածածնին, և առաջի
ամենայն սրբոց, և առաջի ձեր հաբբ
և եղբարբ զամենայն մեղս զորս գործ-
եալ եմ։ Քանզի մեղայ խորհրդ-
դով, բանիւ և գործով, և ամ-
նայն մեղքք զոր գործեն մարդիկք։

Մեղայ, մեղայ։ Աղաչեմ զձեզ
խնդրեցէք վասն իմ յաստուծոյ
զթողութիւն։

Պատասխանեսցեն սրբ մերձն են։

Ողորմեսցի քեզ աստուած հզօրն
և թողութիւն շնորհեսցէ ամենայն
յանցանաց քոց՝ անցեալոյն և այժ-
մուս և յառաջակայէն փրկեսցէ,
և հաստատեսցէ յամենայն գործս
բարիս։ Եւ հանդուսցէ զքեզ 'ի
հանդերձեալ կեանսն, ամէն։

Պատասխանեսցէ և ինքն։

Աղաւեսցէ՛ և զձեզ մարդասէրն
աստուած, և թողցէ զամենայն յան-
ցանս ձեր։ տացէ ժամանակ ապաշ-
խարելոյ և գործելոյ զբարիս։ ուղ-
ղեսցէ և զառաջակայ կեանս ձեր
շնորհք սուրբ հոգւոյն հզօրն և
ողորմածն և նմա փառք յաւիտ՛։

Դպիրքն։

Յիշեսջիր զմեզ առաջի անմահ գա-
ռին աստուծոյ։

Քահանայն։

Յիշեալ լիջիք առաջի անմահ գա-
ռին աստուծոյ։

Դպիրքն Սաղմոս։ զԺ։ Փոխ։

Աղաղակեցէք առ տէր ամենայն։

Սար-

Սարկաւագն քարոզէ։

Սուրբ եկեղեցեաւս աղաչեսցուք։

Քահանայն։

Լամջ տաճարիս և առաջի ճաճանչաւոր և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք, սուրբ և զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ քո փառաւորեմք, և քեզ մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ։ Ամէն։

Քահանայն ասացէ Սաղմոս. խբ. Կցորդ։ Եւ ելցէ 'ի խորանն։

Մոկոյ առաջի սեղանոյ ասացուածոյ։

Սարկաւագն՝ փոխ։

Դատ արա՛ ինձ ասուած իմ՝ եւ։

Սարկաւագն քարոզէ։

Եւ եւս խաղաղութիւն զտէր աղա՛։ Օրհնեսցուք զՀայր տեառն մերոյ յիսուսի քրիստոսի որ արժանի արար զմեզ կալ 'ի տեղւոջս փառաբանութեան և երգել զերգս հոգեւորս ամենայն։

Քահանայն։

Ի յարկի սրբութեան և 'ի տեղւոջս փառաբանութեան. հրեշտակաց բնակարանիս և մարդկան քաւարանիս, առաջի ասուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք։ զսուրբ և զհրաշալի և զյաղթող զտէրութիւնդ քո օրհնեմք և փառաւորեմք։ և քեզ ընդ երկնային զօրսն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ։ Ամէն։ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Իսկ եթէ եպիսկոպոս լինիցի խորհրդածուն ածցէ 'ի վերայ լանջացն զպատուական եմիփորոնն. և մատուցեալ առ ընծայարան սեղանոյն, և 'ի ծունկս անկեալ յորդահոս արտասուաքն լուսաւորեալ ասասցէ զաղօթս առ սուրբ հոգին տնօրինիչ գործոյն։

Գրիգորի Նարեկացւոյն. 1.Գ։

Ամենակալ բարերար մարդասէր ածբողբիւղ, յօրինող երեւութից և անեղերեւութից, վերկոյ և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հղոր հոգի, հայցեմք բաղկատարած մաղթանաց դոչմամբ հեծութեամբ՝ յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։ Մատչիմք մեծաւ դողութեամբ՝ սասանիկ երկիւղիւ՝ մատուցանել. նախ զբանականս զոյս պատարագ՝ քում անշնչին զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի հոյլենի անկապուտ պատուոյդ, և քենոզի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ էմնա-

էմմանուէլ՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի։ Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երբեակ անճնաւորութիւն միոնական աստուածութեանդ, յորոց մի և դու Հանուչիս անհաս։ Բեւ, և 'ի ձեռն քոյ առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալն և զգալոցն, զերեալն և զոչ գոյացեալն, անաստուերաբար բարբառով բանի վերապատմեցին։ Հոգի աստուծոյ քարողեալ զքեզ մնալիսի, որ 'ի գնալն քոյ 'ի վերայ Ջրոցն՝ անպարագիր զօրութիւն, ահեղ շրջարկուք տաճողականաւ՝ թեւապարիակ պաշտպանողօրէն զթասիրեալ 'ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր։

Յոր կերպարան օրինակութեան՝ նախ քան վկայուցանել զլոյծդ մածուած վերջնում՝ վարադուրիդ՝ յօրինեցեր կարօղ տիրապէս զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից յանէից։ Բեւ ստեղծանին 'ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս առ 'ի քէն՝ յայնմ ժամանակի, որ է օր վերջին՝ այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց։ Բեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս հօրն իւրում՝, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի։ մերովս կերպիւ զքեզ աւետարանեաց Հշմարիտ աստուած՝ հաւատար և համագոյ հօր իւր հզօրի։ և զառ 'ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իւր զաստուածամարտիցն զքո հեստելոցն՝ չարաբանական բերանս կարկեաց, և զիւրն շնորհեաց՝ արդարն և անարատն՝ գտիչն ամենայնի։ որ վասն մեզայ մերոյ մատնեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Փա՛ռք 'ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Դարձեալ կրկնեցից 'ի նոյն կարդ բանի, մինչև վստահութիւն վերհայեցողութեան լուսոյ՝ հրաշապէս յայտնեսցի։ ազդեալ աւետարանել վերսին զկրկին խաղաղութիւն։

Ազաչեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ՝ զկառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անսատեղծ անժամանակ հոգւոյդ զթածի, որ բարեխօսդ ես վասն մեր յանմռունչ հեծութիւնս՝ առողջմածդ հոյր։ որ զսուրբն պահես, և զմեղուցեալն մաքրես՝ և տաճարս կազմես կենդանի և կենցուցիչ

ցուցիչ կամաց բարձրեալդ հօր։ Ա.Զդ՝ աղաւեա՛ զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ո՛չ է հաճոյ քումդ բնակութեան։ Եւ մի՛ շնչցին առ 'ի մինչ՝ լուսոյդ շնորհայ փայլմունք 'ի տեսակեանցս աչաց խնամտիչս։ վասն զի զքեզ ուսոք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Եւ քանզի մինդ յերբորդութենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի խաչի։ խակ զու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցիս զմեզ օթեւանս պատուականս ամենայն պատրաստութեամբ՝ 'ի վայելումն ճաշակման երկնաւոր զառնդ, առանց պատժոց դատապարտութեան՝ ընդունելոյ զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան։ Եւ հալեսցի 'ի հրոյս յայմանէ զայթակղութիւնս մեր, որպէս մարդարէին կենդանաբերոյն կայծակամբն՝ 'ի ձեռն ունելոյն մատուցման։ զի յամենայնի քոյդ քարոզեսցի զթութիւն, որպէս որդւոյդ տատուծոյ հօր քաղցրութիւն։ որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութիւնն, և զսրոնկան յառաջեցոյց յերկնային արքայութիւնն՝ արդարոյն երանութեան։ Ա.յո՛՝ այո՛՝ և ես մի եմ 'ի նոցանէ։ և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ քրիստոսի ստացեալս։ Զի յայսմ՝ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո տատուածութիւնդ՝ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութիւն դովութեան։

'Ի Զայն։

Զի քո է զթութիւն, և կարողութիւն, և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Այս յարոցեալ դայ առ ընծայարան սեղանոյն։ Ա.ռ որ մատուցանէ նախաստարկաւորն զնշխարն։

Զոր առեալ քահանայն դնէ 'ի մաղմանն ասելով։

Յիշատակ տեառն մերոյ Յիսուսի քրիստոսի։

Որ բաղմեալ հանդէպ յանարուեստ աթոռ, զմոհ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան։ օրհնեցէք՝ գովեցէք և բարձր արարէք զնա յա՛։

Եւ առեալ զդինին՝ արկանէ խաչանիշ 'ի սկիհն ասելով։

Յաղագս յիշատակի փրկագործ տնօրէնութեան տեառն տատուծոյ



Եւ

եւ վերկ ջին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Որ 'ի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք և անմահացան, օրհնեցէք՝ գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան։

Եւ ասացէ 'ի Ծածուկ զաղթս Յոհաննու Ոսկեբերանին։

Տէր աստուած մեր որ զերկնաւոր հացդ զաէրն մեր Յիսուս Քրիստոս զկերակուրդ ամենայն աշխարհի՝ առաքեցեր վերկիչ և կեցուցիչ և բարերար՝ Օրհնել և սրբել զմեզ։ Լինքնին դու տէր Օրհնեա՛ և այժմ զառաջադրութիւնս զայս։ Ընկալ զսա յերկնային քո սեղանդ։ Յիշեա՛ որպէս բարերար և մարդասէր զմատուցօղս և վասն որոց մատուցանի։ Եւ զմեզ անդատապարտ պահեա՛ 'ի քահանայագործութիւն աստուածային խորհրդոց քոց։ Զի սուրբ և փառաւոր է ամենապատիւ մեծ վայելչութիւն փառացդ հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ, այժմ և"։

Եւ սքողեսցէ ասելով. Սաղմոս. ղէ։

Տէր թագաւորեաց։ Հաստատեաց։ Զմիւսանձան։ Ի ձայնէ։ Զքանչելի։ Տան քում։

Եւ խաչակնքեսցէ երիցս ասելով։

Հոգին սուրբ եկեսցէ 'ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լցցէ 'ի վերայ քո։

Եւ արկանէ զխունկն ասելով։

Խունկ մատուցանեմ առաջի քոյ Քրիստոս բուրումն հոգեւորական։ Ընկալ 'ի սուրբ յերկնային և յիմանալի քո մատուցարանդ 'ի հոտ անուշից։ Առաքեա՛ առ մեզ վերակացուն զշնորհս և զպարգեւս հոգւոյդ սրբոյ։ և քեզ մատուցանեմք զփառս ընդ հօր և ընդ հոգւոյդ սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից։ ամէն։

Եւ ապա խնկելով 'ի մէջ եկեղեցւոյն լիջանէ հանդերձ սարկաւագաւքն, և ելեալ 'ի վեր երից երկրպագեսցէ ըստ ղանն։ Եւ նախասարկաւագն 'ի մէջ եկեղեցւոյ կալով ձայնեսցէ։

Օրհնեա՛ տէր։

Եւ քահանայն 'ի Զայն ասասցէ։

Օրհնեալ թագաւորութիւնն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ Ա. այժմ և միշտ և յաւիտեանս"։

Եւ սկսանին դպիրքն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն։ Եւ յաւարտիլն ձայնեսցէ նախասարկաւագն։

Եւ եւս խաղաղութեան զաէրս աղաչեսցուք ընկալ կեցս և ողորմեա։

Օրհնեա՛ տէր։

Եւ

Եւ քահանայն ասացէ։

Օրհնութիւն և փառք հօր և՚։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպիրքն։

Առաջի քո տէր։

Եւ քահանայն ասացէ 'ի Ձայն։

Տէր աստուած մեր՝ որոյ կարողութիւնդ անքննելի է. և փառքդ անհասանելի։ Որոյ ողորմութիւնդ անչափ է. և գթութիւնդ անբաւ։ Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում, նայեաց 'ի ժողովուրդս քո՝ և 'ի տաճարս այս սուրբ։ Եւ արա ընդ մեզ և ընդ աղօթակիցս մեր՝ առատապէս ողորմութիւն քո և գթութիւն։ Օ՛ի քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յա՚։

Եւ սկսանին ասել դպիրքն սաղմոս և շարական ըստ պատշաճին։

Եւ մինչ նոքա երգեն, Քահանայն ասացէ զաղօթս 'ի Ծածուկ։

Տէր աստուած մեր կեցո՛ զժողովուրդս քո՛. և օրհնեա՛ զժառանգութիւնս քո՛. զբռնութիւն եկեղեցւոյ քո՛ պահեա՛. սրբեա՛ զսատանայ ոգի. զանեցին սիրով զվայելչութիւն տանդ։ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով. և մի՛ թողուր զյուսացեալս 'ի քեզ։ Օ՛ի քո՛ է կարողութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս յա՚։

Խաղաղութիւն ամենեցուն։

Որ հաստատեցեր զայս և միաձայն մեզ ամենեցուն՝ ուսուցեր աղօթել. և զերկուց և զերից միաձայնելոց յանուն քո՛ զվնդրուածս պարգևել խոստացար։ Դու և այժմ զձառայից քոց զվնդրուածս առ 'ի յօգուտն կատարեա՛։ Շնորհելով մեզ յայսմ յաւիտենից զդիտութիւն քումդ ճշմարտութեան։ Եւ 'ի հանդերձեալն զկեանսն յաւիտենականս պարգևելով։ Օ՛ի բարերար և մարդասէր ես աստուած. և քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ՚։

Եւ 'ի փառք տալն դպրաց, երկիրպագցեն առաջի բեմին ամենեքեան։

Եւ քահանայն երկրպագելով սեղանոյն ասասցէ զաղօթս 'ի Ծածուկ։

Տէր աստուած մեր՝ որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս



հրեշ-

հրեշտակաց և հրեշտակապետաց 'ի սպասաւորութիւն փառաց քոց։ Ա.բա այժմ ընդ մուտս մեր մտանել և սրբոց հրեշտակաց։ և լինիլ պաշտօնակից մեզ՝ և փառաբանակից քում բարերարութեանդ։

'Ի Զայն

Օ՛ի քո է կարողութիւն, և զօրութիւն, և փառք յաւիտեանս։ ամէն։

Եւ համբուրեսցեն զսեղանն։ և սարկաւագունքն գոչեսցեն։

Պրօսխու�՝։

Եւ սարկաւագաց մի ոմն բարձրացուցանէ զաւետարանն սուրբ։

Եւ դպիրքն ըստ խորհրդոյ աւուրն երգեն զերեքսրբեանն։

Սուրբ աստուած սուրբ և հզօր սուրբ և անմահ որ խաչեցար, Լայլ։

Եւ քահանայն զոյդ սմին ասասցէ։ 'ի Ծ՝ածուկ։

Ընդ սուրբ՝ որ 'ի սուրբս հանգուցեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերօբէ՛ք դովեն զքեզ՝ և քերօբէ՛ք փառաբանեն։ և ամենայն երկնային զօրութիւնք՝ քեզ երկիրպագանեն։ Որ 'ի չգոյէ 'ի գոյ ածեր զամենայն արարածս։ որ արարեր զմարդն ըստ պատկերի քում և նմանութեան։ և ամենայն շնորհիւ քով զնա զարդարեցեր։ և ուսուցեր խնդրել զմաստութիւն և զգօնութիւն։ Եւ ոչ անտես արարեր զմեղուցեալն, այլ եդեր 'ի վերայ նորա ապաշխարութիւն փրկութեան։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստացեալ և զանարժան ծառայս քո 'ի ժամուս յայսմիկ՝ կալ առաջի փառաց սրբութեան սեղանոյ քոյ, և զօրինաւոր երկրպագութիւն և զփառաբանութիւն մատուցանել քեզ։ Դու տէր՝ ընկալ 'ի բերանոյ մեղաւորացս զերեքսրբեան օրհնութիւնս։ և պահեա զմեզ քոյին քաղցրութեամբդ։ Թող մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և զակամայ։ Սրբեա զհոգի՝ ըզմիտս՝ և զմարմինս մեր։ և շնորհեա 'ի սրբութեան պաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց։ Բարեխօսութեամբ սրբուհւոյ աստուածածնին և ամենայն սրբոց քոց՝ որք յաւիտենից քեզ բարեհաճոյացան։ Օ՛ի սուրբ ես տէր աստուած մեր։ և քեզ վայելէ փառք խրախճանութիւն և պատիւ։ Ա.յժմ և միշտ և յա՛։

Եւ 'ի կատարել երեքսրբենոյն և աղօթիցն՝ սարկաւագն քարոզէ։

Ա՛ւեւս խաղաղութիւն զտէր աղա՛։

Ա՛ման խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոց։

Եւ

Եւ քահանայն՝ բաղկատարած ասացէ զաղօթս 'ի Ծառուկ։

Տէ՛ աստուած մեր՝ զբաղկատարած զաղաչանս ծառայից քոց վերընկալցիս և ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում։ Օգթութիւն քո առաքեա՛ 'ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ 'ի քէն առատ ողորմութեանդ։

Սարկաւագն ձայնեսցէ։

Օրհնեա՛ տէր։

Եւ քահանայն ասասցէ 'ի Զայն։

Օ՛ի ողորմած և մարդասէր ես աստուած գոլով և քեզ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ, այժմ և՛։

Յետ այսորիկ՝ երկրպագէ սեղանոյն քահանայն, և եկեալ բաղմի յաստիճանն։ և սկսանին դպիրքն ասղմոս ըստ խորհրդոյ աւուրն։

Եւ ընթերցին զգիրս մարգարէականս և զառաքելականս։

Եւ զկնի ալէլուիայ՝ ըստ ցուցանելոյ ընթերցուածոյն և յաւարտմանն։

Սարկաւագն ձայնեսցէ։

Օրթի։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ 'ի վերայ ժողովրդեանն ասելով։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։



Սարկաւագն։

Երկիւղածութեամբ լուարուք։

Սարկաւագն։

Սրբոյ Աւետարանիս որ ըստ Մատթէոսի։

Դպիրքն։

Փառք քեզ տէր աստուած մեր։

Սարկաւագն։

Պռօսխումէ։

Դպիրքն։

Ամէն աստուած։

Եւ սարկաւագն ընթերցցի զաւետարանն սրբ։ Եւ յաւարտմանն ասասցեն ամենեքեան։

Փառք քեզ տէր աստուած մեր։

Եւ ապա ասեն զնիկիական դաւանութիւնն 'ի լման։

Հաւատամք 'ի մի աստուած հայր ամենակալ, յարարիչն երկնի և երկրի, երեւելեաց և անտեսանելեաց։ Եւ 'ի մի տէր Յիսուս Քրիստոս յորդին աստուծոյ, ծնեալն յաստուծոյ հօրէ միածին։ այսինքն յէութէ հօր։ Ա՛ստուծոյ՝ լոյս 'ի լուսոյ՝ աստուած ճշմարիտ՝ յաստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած։ Նոյն ինքն 'ի բնութենէ հօր որով ամենայն

ամենայն ինչ եղեւ յերկինս և 'ի վերայ երկրի, երեւելիք և անտեսանելիք։ Որ յաղագս մեր մարդկան, և վասն մերոյ փրկութեան՝ իջեալ 'ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարեալապէս 'ի մարիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով։

Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ։ և զամենայն որ ինչ է 'ի մարդ։ ճշմարտապէս և ոչ կարծեօք։

Ցարչարեալ, խաչեալ, թաղեալ։ յերրորդ աւուր յարուցեալ։ երեալ 'ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ հօր։

Դալոց է նովին մարմնովն և փառաւք հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս։ որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։

Հաւատամք և 'ի սուրբ հոգին, յանեղն և 'ի կատարեալն։

Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։

Որ էջն 'ի յորդանան։ քարոզեաց զառաքեալն։ և բնակեցաւ 'ի սուրբսն։

Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի։

Ի մի մկրտութիւն։ յապաշխարութիւն։ 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Ի յարութիւնն մեռելոց։ 'ի դատաստանն յաւիտենից։ հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւնն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս։

Իսկ որք ասեն՝ էր երբեմն, յորժամ ոչ էր որդի։ կամ էր երբեմն, յորժամ ոչ էր սուրբ հոգին։ կամ թէ՝ յոչ էից եղեն, կամ յայլոմէ էութենէ ասեն լինել զորդին աստուծոյ՝ և կամ զսուրբ հոգին։ և թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք։ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի։

Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով սրբոյ երրորդութեանն և միոյ աստուածութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։ այժմ և՝։

Սարկաւագն քարոզէ 'ի Զայն։

Եւ եւս խաղաղութեան զտէր աղաչեսցուք։

Դպիրքն Տէր ողորմեա։

Եւ եւս հաւատով աղաչեսցուք։

Մինչ նոքա երգեն, քահանայն ասասցէ զաղօթս 'ի Ծրածուկ։

Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս։ որ մեծդ ես ողորմութեամբ, և առատ պարգեւօք բարերարութեան քո

.քս։ Որ դու քոյին կամաւդ 'ի ժամուս յայսմիկ համբերեցեր չարչարանաց խաչի և մահու յաղագս մեղաց մերոյ։ Եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն։

Հաղորդս արա և զմեզ տէր աղաչեմք զքեզ՝ աստուածային պարգեւացդ։ Թողութեան մեղաց և ընդունելութեան հոգւոյդ սրբոյ։

'ի Զայն։

Որպէս զի՝ արժանաւորք եղիցուք զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ հօր և սուրբ հոգւոյդ այժմ և"։

Խաղաղութիւն ամենեցուն։

Խաղաղութեամբ քով քրիստոս փրկիչ մեր։ որ 'ի վերս է քան զամենայն միտս և զբանս։ ամրացո՛ զմեզ և անեղծիւղ պահեա՛ յամենայն չարէ։ Հաստատեա՛ զմեզ ընդ Հրշմարիտ երկրպագուս քո։ որք հոգւով և Հշմարտութեամբ քեզ երկիրպագանեն։ Այսն զի ամենասուրբ երրորդութեդ վայելէն փառք իշխանութիւն և պատիւ հօր և"։

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս ամէն։

Սարկաւագն։

Օրհնեա՛ տէր։

Քահանայն խաչակնքէ 'ի վերայ ժողովրդեանն ասելով 'ի Զայն։

Տէր աստուած Օրհնեսցէ զքա՛"։

Յետ այսորիկ՝ եթէ եպիսկոպոս իցէ 'ի բաց հանցէ զնմիփսոնն։

Սարկաւագն։

Սաղմոս ասացէք տեառն ամ մերոյ։

Դպիրքն ասեն զարքասացութիւնն քոտ խորհրդոյ աւուրն։

Սարկաւագն։

Մի՛ որ յերախայից։

Դպիրքն։

Սարմին տէրունական։

Եւ դան խնկարկելով 'ի սուրբ խորհուրդն։

Սարկաւագն։

Յարեւու Եհար զխորան։

Դպիրքն։

Եւ ցնծայ նա որպէս հսկայ։

Եւ ապա եղանակեսցեն։

Որք զքրօքէին։

Ապա սարկաւագացն վերաբերիցի սրբազան հացն՝ և անմահութեան բաժանն 'ի սուրբ սեղանն։ Եւ մինչ նոքա երգեն։ քահանայն խոնարհեսցի առաջի սրբոյ սեղանոյն և խորհրդաբար աղօթեսցէ 'ի Ծածուկ։

Ո՛է որ արժանի է յամբառնելոցս մարմնաւոր ախտիւք և ցանկութիւք մատչել 'ի սեղան քո։ կամ, սպասաւորել արքունական փառաց քոց։

Քանզի

Բանդն պաշտել զքեզ մեծ և ահաւոր՝ երկնաւոր զօրութեանդդ խակ է։ Սակայն վասն անչափ բարերարութեան քո՝ անպարագրելի բանդ հօր, եղեր մարդ՝ և քահանայապետ մեր երևեցար։ Եւ իբր տէր ամենեցուն այսմ սպասաւորութեան՝ և անարիւն զենման՝ զքահանայութիւն աւանդեցեր մեզ։ Այսն զի դու ես տէր աստուած մեր որ տիրես երկնաւորաց և երկրաւորաց։ Որ'ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս։ սերովբէից տէր և թագաւոր խրատելի։ Որ միայն սուրբ ես և'ի սուրբս հանգուցեալ։ Այլաչեմք ընդքեզ միայն բարերար և հեշտալուր։ նայեա յիս'ի մեղուցեալ և յանպիտան ծառայս քո։ Եւ սրբեա զհոգի և զմիտս իմ յամենայն պղծութենէ չարին։ Եւ բաւականացո՛ զիս զօրութեամբ սուրբ հոգւոյդ որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս և քահանայադրծել զքո անարատ մարմինդ և զպատուական արիւնդ։ Քեզ խոնարհեցուցեալ զպարանոցս իմ, մաղթեմ։ մի դարձուցաներ զերեսս քո յինէն։ և մի մերժեր զիս'ի ծառայից քոց։ Այլ արժանի արա մատուցանել քեզ զընծայս զոյս յինէն'ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ։ Այսն զի դու ես որ մատուցանես՝ և մատչիս՝ և ընդունիս, և տաս քրիստոս աստուածմեր։ Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն քո՝ հօրդ և ամենասուրբ և բարերար հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս։"

Եւ ընծայքն վերաբերին'ի սեղանն։

Եւ քահանայն խնկեսցէ և լուասցէ զմատառնան ասելով։

Լուսոյն սրբութեամբ զձեռս։"

Սարկաւագն։

Եւ ես խաղաղութեան զտէր աղա։"

Եւ ես հաւատով և սրբութեամբ։

Մինչ նոքա քարոզեն, քահանայն բազկատարած աղօթեսցէ'ի Ծածուկ։

Տէր աստուած զօրութեանց և արարիչ ամենայն լինելութեանց։ Որ յանէութենէ զբնաւս'ի ցուցակաւորութիւն ածեալ գոյացուցեր։ Որ և զմերս զհողեղէն բնութիւնս պատուեալ մարդասիրապէս։

Այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարդեցեր սպասաւորս։ Դու տէր՝ որում պատարագեմք զպատարագիս ընկալ առ'ի մինչ զառաջադրութիւնս զոյս, և աւարտեա զոս'ի խորհրդականութիւն



(1005/2010) 15927-58

Հ.Ս.Հ. Հանրային Գրադարան
Հ.Ս.Հ. Հանրային Գրադարան
7/XI-1922
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

մարմնոյ և արեան միածնի քո. դեղ թողութեան մեղաց պարգևեա՛ ձա-
շակողացս զհոգս ղոյս և զբաժակս։

Ի Զայն։

Շնորհօք և մարդասիրութ՚ տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի. ընդ որում՝ քեզ հօր միանգամայն և հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշ-
խանութիւն և պատիւ"։

Խաղաղութիւն ամենեցուն։

Պոպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Պոպիրքն։

Առաջի քո տէր։

Սարկաւագն։

Ողջոյն տուք միմեանց։

Պոպիրքն։

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ։

Եւ համբուրեն զսեղանն և զմիմեանս. և սարկաւագն ճայնեսցէ։

Ահա կացցուք երկիւղիւ կացցուք։

Պոպիրքն։

Առ քեզ աստուած։

Սարկաւագն։

Պատարագ քրիստոս մատչի։

Պոպիրքն։

Ողորմութիւն և խաղաղութիւն։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ ի Զայն։

Շնորհք, սէր և աստուածային սրբարար զօրութիւնն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան։

Պոպիրքն։

Ամէն և ընդ հոգւոյդ քում.

Սարկաւագն։

Զդրունս զդրունս ամենայն։

Պոպիրքն։

Ունկնդիր առ քեզ տէր ամենակալ։

Սարկաւագն։

Եւ զոհասցարուք։

Պոպիրքն։

Երժան և իրաւ։

Մինչ նոքա երգեն, քահանայն ձեռնամած աղօթեսցէ ի Ն՝ոսմամէ։

Երժանէ ստուգապէս և իրաւ՝ ամենայորդոր փառաւորել միշտ երկրպագանելով փառաւորել զքեզ հայր ամենակալ։ Որ քոյին անեղնելի և տարար-

արարչակից բանիւդ զանիծիցն բարձեալ զկիրճին։ Նոր ժողովուրդ լինք-
եան առեալ զեկեղեցի սուրբ հայաստանեանց զհաւատացեալս 'ի քեզ։ Եւ
զնոսին ընութիւն ըստ 'ի կուսէն անտառութեան՝ հաճեցար բնակիլ 'ի մեզ։
Եւ նորագործ աստուածապէս ճարտարապետեալ՝ զերկիրս երկին արար։
Այսն զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն ջոկք՝ զարհուրելոք 'ի փայլակնացայտ և յանմատոյց լուսոյ աստուածութեանդ։
Եղեալ այդպիսի մարդ՝ յաղագս մերոյ փրկութեան շնորհեաց մեզ ը երկնայինսն պարել զհոգեղէն պարս։

'Ի Զայն։

Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս։ և համարձակապէս գոչեալ աղաղակել ը նոսին և ասել։

Դպիրքն։

Սուրբ սուրբ սուրբ տէր զօրութեաց լի են երկինք և երկիր փառաւք քոյ։

Մինչ նորա երգեն, քահանայն բազկատարած առասցէ 'ի Նրամանէ։

Ա՛ սուրբ՝ սուրբ ես ճշմարտապէս և ամենասուրբ։ և ո՞վ զոր պանծասցի բովանդակիլ բանիւ զքո՛ 'ի մեզ զանբաւ բարեգործութիւնս։

Որ և անդէն իսկ 'ի նախնումն զանկեալն ընդ մեղաց զանազան եղանակաւք՝ խնամեալ սփոփեցեր։ Արարիչ, օրինացն տուչ թեամբ, քահանայութեամբ, և ըստուերակերպ երնջուցն մատուցմամբ։

Իսկ 'ի վախճան աւուրցս այսոցիկ՝ զբովանդակ իսկ զպարտեաց մերոյ խզեալ զդատակնիքս։ Ետուր մեզ զորդիդ քո՛ միածին, պարտապան և պարտս։ զենումն և օծեալ։ դառն և երկնաւոր հաց։ քահանայապետ և պատարագ։

Այսն զի ինքդ ե բաշխող։ և նոյն ինքդ բաշխի 'ի միջի մերում միշտ անծախապէս։ Այսն զի եղեալ հաւատեաւ և առանց ցնորից մարդ։ և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յաստուածածնէն և 'ի սուրբ կուսէն մարիամայ։

Ո՛անապարհորդեաց ը ամենայն կիրս մարդկային կենցաղոյս առանց մեղաց։ Եւ յաշխարհակեցոյցն՝ և առեալն փրկութիւն մերոյ՝ եկեալ կամաւ 'ի խաչ։ Ուռեալ զհայն՝ 'ի սուրբ յաստուածային՝ յանմահ՝ յանեպատ՝ և յարարչադրոյ՝ 'ի ձեռս իւր։ օրհնեալ՝ զոհացաւ՝ եբեկ՝ և ետ իւրոյ ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով։

Ուռէք

'ի Զայն։

Ա՛ռէք Կերէք Այս է ՄԱՐՄԻՆ ԻՍ՝ որ վասն ձեր և բազմաց բաշխի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

'ի Ծածուկ։

Նոյնպէս և զբաժակն առեալ։ Օրհնեանց՝ գոհացաւ՝ էարբ՝ և ետ նոցա ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով։

'ի Զայն։

Արբէք 'ի սմանէ Ամենեքեան։ Այս է ԱՐԻՒՆ ԻՍ՝ նորոյ ուխտի, որ յաղագս ձեր և բազմաց հեղանի 'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

'ի Ծածուկ։

Եւ զոյն միշտ իւր յիշատակ առնելով, պատուիրան աւանդեաց մեզ բարերար որդիդ քո միածին։ Եւ ի՛ջեալ 'ի ստորին, վայրս մահու մարմնովն՝ զոր 'ի մերմէս ընկալաւ յաղագակցութենէ։ Եւ զնիզակ դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս։ Ըղքեղ միայն ծանոյց մեզ Հշմարիտ ՇՆ՝ զաստուածդ կենդանեաց և մեռելոց։

Եւ առնու զընծայսն 'ի ձեռն, և ասասցէ 'ի Ծածուկ։

Եւ արդ մեք տէր՝ ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ փրկական մարմնոյ և արեան միածնի քոյ։

Յիշեմք զդորա որ վասն մեր զիրկա-դարձ չարչարանսն։

Օ՛ կենսատու խաչելութիւնն։

Օ՛ երեքօրեայ թաղումն։

Օ՛ երանելի յարութիւնն։

Օ՛ աստուածապէս համբարձումն։

Օ՛ նստելն ընդ աջմէ քո՝ հայր։

Օ՛ ահաւոր և զկատաւորեալ զմիւս անգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք։

Եւ զընծայսն սակաւ մինչ բարձրացուցեալ, մատուցէ առ Հայր։

Եւ դիցէ 'ի վերայ սրբոյ սեղանոյն ասելով 'ի Զայն։

Եւ զքոյս՝ 'ի քոյոյ՝ քեզ մատուցանեմք ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն։

'Դպիրքն։

Յամենայնի օրհնեալ ես տէր։

Մինչ նոքա երգեն, քահանայն բազկատարած ասասցէ 'ի Ծածուկ։

Օ՛ քեզ արդարև տէր աստուածմեր դասեմք։ և զքեզն գոհանամք հանապազ։ Որ զանց արարեր զմեզ ամենայն անարժանութեամբս։ այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր ապաստաւորս։ Ո՛չ յաղագս մերոյ մինչ բարեգործութեանց, յորոց

յորոց յոյժ թանկագին եմք և միշտ
ունայն զտանելիք հանապազ։ Ա.յլ
'ի քո բազմաղեղ ներողութիւնդ
ցանգ ապաւինեալ համարձակիմք
մերձենալ 'ի սպասաւորութիւն մարմ-
նոյ և արեան միածնի քոյ տեառն
մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի։
օրհնեա՛ վայելչ վարք իշխանու՛։

'ի Զայն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Աստուծոյ երկիրպագանացուք։

Դպիրքն։

Առաջի քոյ տէր։

Մինչ նոքա երգեն, քահանայն խնամարհեալ
երկիրպագցէ սեղանոյն և ասացէ։

Երկիրպագանեմք՝ և աղաչեմք՝ և
խնդրեմք 'ի քէն բարերար ոճ։
Առաքեա՛ 'ի մեզ և յառաջի եղեալ
ընծայս այս՝ զիշանչենաւորակից քո՛
և զէակից սուրբ հոգւոյդ։

Դպիրքն։

Որդի աստուծոյ որ պատարագեալ։

Եւ կացեալ սարկաւագն առ ընթեր քա-
հանային երկիւղս և դողս թեամբ մեծաւ։
և ասացէ 'ի ցած՝ Ամէն օրհնեա՛ տէր։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զընծայսն ասե-
լով 'ի ծածուկ։

Որով զհացս օրհնեալ մարմին Քրիս-
տոսի արասցես տեառն մերոյ
և փրկչին յիսուսի քրիստոսի։
Որով զհացս օրհնեալ մարմին Քրիս-
տոսի արասցես տեառն մերոյ
և փրկչին յիսուսի քրիստոսի։
Որով զհացս օրհնեալ մարմին Քրիս-
տոսի արասցես տեառն մերոյ
և փրկչին յիսուսի քրիստոսի։
Եւ զբաժակս օրհնեալ արիւն աստու-
ծոյդ արասցես տեառն մերոյ և
փրկչին յիսուսի քրիստոսի։
Եւ զբաժակս օրհնեալ արիւն աստու-
ծոյդ արասցես տեառն մերոյ և
փրկչին յիսուսի քրիստոսի։
Եւ զբաժակս օրհնեալ արիւն աստու-
ծոյդ արասցես տեառն մերոյ և
փրկչին յիսուսի քրիստոսի։
Որով զհացս և զբաժակս օրհնեալ
մարմին և արիւն Քրիստոսի արաս-
ցես տեառն մերոյ և փրկչին յի-
սուսի քրիստոսի փոխարինելով հոգ-
ւոյդ քում սրբոյ։

Երեցս կրկնեսցէ։
Ապա ասացէ 'ի Զայն։

Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ
մերձեցելոցս, յանդ ատապարտութի-
'ի քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Եւ

Եւ քահանայն պատուհետեւ ոչ բարձրագոյն քան զընծայսն զձեռսն իւր տարածեալ այլ խոնարհագոյն։ Եւ զայսն 'ի նոյն յառեալ աղօթեսցէ 'ի Տածուն։

Սովաւ շնորհեա զսէր զհաստատութիւն եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի։ Սրբոյ եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց։ քահանայից։ սարկաւագաց։ թագաւորաց։ աշխարհի։ իշխանաց։ ժողովրդոց։ ճանապարհորդելոց։ նաւելոց։ կապելոց։ վտանգելոց։ աշխատելոց։ եւ որք 'ի պատերազմունս բարբարոսաց։

Սովաւ եւ օդոյ շնորհեա զբարեխառնութիւն։ եւ անդոյ զպտղաբերութիւն։ Եւ ախտացելոց 'ի պէսպէս ցաւս՝ վերթափէս զառողջութիւն։ Սովաւ հանդէպ զամենեսեան յառաջադոյն 'ի քրիստոս զենջեցեալսն։

Օ՝նախահարս։
Օ՝հայրապետս։
Օ՝մարգարէս։
Օ՝առաքեալս։
Օ՝վկայեալս։
Օ՝եպիսկոպոսունս։
Օ՝երէցունս։
Օ՝սարկաւագունս։

Եւ զընտաւ ուխտ եկեղեցւոյ քոյ սրբոյ։ Եւ զամենեսեան յաշխարհակեաց կարդէ զարս և զկանայս հաւատով վախճանեալս։



'ի Զայն։

Ընդ որս և մեզ այդ արասցես բարերարաւ ատուած ողորմութիւնք։

Դպիրքն։

Յիշեա տէր և ողորմեա։

Քահանայն։

Ընծանելն սրբոյ կուսին Մարիամու։ Եւ յովհաննու մկրտչին։ Սաւփանոսի նախաւկային։ Եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ 'ի սուրբ պատարագս աղաչեմք։

Դպիրքն։

Յիշեա տէր և ողորմեա։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն ձեռնամուծ ասասցէ։

Ռուբելոց սրբոց մարգարէից։

Եւ մինչ նոքա երգեն զբարոյս, քահանայն ասասցէ զաղօթս զսա 'ի միասին աւարտեսցին։

Յիշեա տէր և ողորմեա, և օրհնեա զսուրբ կաթուղիկէ և զառաքելական եկեղեցի քո։ Զոր վերկեցեր պատուական արեամբ միածնի քոյ։ և ազատեցեր խաչիւն սրբով։ Շնորհեա սմա զանշարժ զխաղաղս։ Յիշեա տէր և ողորմեա, և օրհնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոսունս՝ որք ուղղղ վարդապետութեամբ հոմանուտն 'ի մեզ զբանն ճշմարտութեան։

'ի Զայն։

'Ի Զայն։

Այս առաւել զեպիսկոպոսապետան մեր, և զպատուական հայրապետն ամենայն հայոց զտէր (այս անուն) շնորհեացես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ։

Եւ դարձեալ սարկաւագն գայ 'ի տեղի իւր։ և քարոզեսցէ բարձր։

Զոհութիւն և փառաբանութիւն։

Մինչ նոքա քարոզին, քահանայն ասասցէ զաղօթս 'ի Ծոյծուկ։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զքո՛ առաջի կացեալ ժողովուրդս՝ և զպատարագս մատուցօղս։

Եւ զարդեւեա՛ սոցա զպիտոյն և զօգտակարն։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և օրհնեա՛ զուխտաւորս և զպտղաբերիչս Եկեղեցւոյ քում սրբոյ։ և զոր յիշեն զաղքատս ողորմածութեամբ։

Եւ հատո՛ նոցա զպարտս նոցա ըստ ընդարձոյս առատութեանդ քում հարիւրապատիկ ատա և 'ի հանդերձեալսն։

Յիշեա՛ տէր և ողորմեա՛, և զԹա՛ 'ի հոգիս հանգուցեալսցն։ Հանգո՛ զնոսա և լուսաւորեա՛ և զատաւորեա՛ ընդ սրբս քո՛ յաշխարհս ուրախութեանդ երկնից։ և արժանի արա՛ ողորմութեան քում։

Յիշեա՛ տէր և զհոգի ծառայիս քո (այս անուն) և ողորմեա՛ նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգո՛ այցելութեամբ 'ի լոյս երեսաց քոց։

Եւ թէ կենդանի է՝ փրկեա՛ զնա յամենայն սրոգպիթից հոգւոյ և մարմնոյ։

Յիշեա՛ տէր և զայնոսիկ որք յանձնեցին մեզ յիշատակել յաղօթս, զկենդանիս և զհանգուցեալս։ և կառավարեա՛ զկամս հայցմանց նոցա և զմերս, ընդ ուղղորդն և որ լի՛ն է փրկութեամբ։

Եւ վարձատրեա՛ բոլորեցուն զանանց և զերանելի բարութիւնդ։

Եւ զբոլոր զկարիս մեր տա՛ հարատև յընդունակութիւն մարմնոյ և արեան վիճակի քո տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի։ ընդ որում քեզ հօր ամենակալի հանդերձ կենդանարար և աղատիչ սուրբ հոգւովդ վայելէ փառք իշխա՞։

Քահանայն դարձցի և խաչակնքեսցէ և ասասցէ 'ի Զայն։

Եւ եղիցի ողորմութիւն մեծիս աստուծոյ և փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ձեզ ընդ ամենեսեանդ։

Դպիրքն։

Ամէն և ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Ամէն և՛ս խաղաղութիւն զտէր աղա՞։

Ամէն։

Ամենայն սրբոյք զքս յիշատակեցաք եւս առաւելապէս զտէր ապա՛։ Ապան մատուցեալ սուրբ եւ՛։

Մինչ սարկաւագն քարոզէ, քահանայն ասացէ 'ի Ծառուկ։

Ընդ ճշմարտութեան և հայր ողորմութեան՝ դոհանամք զքէն։ Որ 'ի վերս քան զերանելի նահապետացն, զմեր պարտաւորելոցս առաւել մեծարեցեր զքնութիւն։

Ապան զի նոցա աստուած կոչեցար։ խակ մեզ՝ հայր հաճեցար անուանիլ զթալով։

Եւ այժմ տէր աղաչեմք զքեզ, զայնպիսի առ 'ի քէն զնորոդ և զպատուական անուանադրութեամբ շնորհ։ Որ ըստ օրէն պայծառացուցեալ ծաղկեցան 'ի մէջ եկեղեցւոյ քում սրբոյ։

'Ի Զայն։

Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր կարդալ զքեզ երկնաւորդ հայր, երդել և ասել։

Եւ դպիրքն բաղխատարած եղանակեսցեն։

Հայր մեր որ յերկինս ես սուրբ։

Մինչ նոքա երգեն, քահանայն աղաթեսցէ 'ի Ծառուկ։

Տէր տէրանց աստուած աստուածոց։ Թագաւոր յաւիտենական։ արարիչ ամենայն արարածոց, հայր անառն մերոյ Յիսուսի քրիստոսի։

Որ տար զմեզ 'ի փրկութիւն, այլ փրկեա 'ի չարէ և տպրեցո 'ի փրկութենէ։

'Ի Զայն։

Օ՛ի քոյ է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Աստուծոյ երկիրպագեսցուք։

Դպիրքն։

Առաջի քո տէր։

Սարկաւագն։

Օրհնեա տէր։

Քահանայն խոնարհեսցի և ամենայն ժողովուրդն շրջիցի 'ի Ծառնկս։

Եւ քահանայն աղաթեսցէ 'ի Ծառուկ։

Որ աղաչեալ ես կենաց և բղխումն ողորմութեան հոգիդ սուրբ։ Ողորմեա ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն աստուածութեան քում։ Պահեա զսոսա ամբողջս, տպաւորեա յոգւոջ սոցա զձեւ մարմնոյ

նոյ ցուցակի։ Ա. 'ի ժառանգուն
և 'ի վինակ հանդերձելոյդ բարեաց։

'ի Զայն։

Քրիստոսիս Յիսուսիս տերամբ մե-
ծամ. ընդ որում քեզ հոգւոյդ սրբոյ
և հօր ամենակալն վայելէ փառք
իշխանութիւն և պատիւ։ Ամէն մ։

Եւ քահանայն առցէ զսուրբ հացն 'ի ձեռն.
և սարկաւագն ձայնեսցէ բարձր։

Պռօխսումէ։

Եւ քահանայն բարձրացուցանէ ակնարեւ
ամենայն ժողովրդեանն և ասասցէ 'ի Զայն։

Ի սրբութիւն սրբոց։

Դպիրքն բարձր ձայնիւ։

Միայն սուրբ, միայն տէր. Յի-
սուս Քրիստոս։

Քահանայն։

Օրհնեալ Հայր սուրբ աստուած
ճշմարիտ։

Դպիրքն։

Ամէն

Քահանայն։

Օրհնեալ Որդիդ սուրբ աստուած
ճշմարիտ։

Դպիրքն։

Ամէն։

Քահանայն։

Օրհնեալ Հոգիդ սուրբ աստուած
ճշմարիտ։

Դպիրքն։

Ամէն։

Օրհնութիւն և փառք հօր և որդւոյ
և հոգւոյն սրբոյ։ Ամէն մ։

Դպիրքն։

Ամէն։

Հայր սուրբ՝ Որդի սուրբ՝ Հոգի
սուրբ։ Օրհնութիւն մ։

Եւ մինչ նոքա երգեն զայս, քահանայն
խնարհեսցի և աղօթեսցէ 'ի Ծածուկ։

Լայեսուց տէր մեր Յիսուս Քրիստոս
յերկնից 'ի սրբութենէ քումմէ, և
յաթոռոյ փառաց թագաւորութե-
քոյ. եկ 'ի սրբել և 'ի կեցուցա-
նել զմեզ։ Որ ընդ հօր նստիս և
աստ պատարագիս։

Ամենի արա՛ տալ մեզ յանարատ
մարմնոյ քումմէ և 'ի պատուական
արենէ. և 'ի ձեռն մեր ամենայն
ժողովրդեանս։

Եւ զայս ասացեալ երկիրպագեսցէ և համ-
բուրեսցէ զսեղանն։

Եւ առեալ զսուրբ մարմինն ողջ թացցէ
յանապական արիւնն և ասասցէ։

Տէր աստուած մեր որ կոչեցեր զմեզ
յանուն միածնի որդւոյ քոյ քրիստոս-
տնեայս.

տանեայս։ Եւ շնորհեցեր մեզ միրտու-
թիւն հոգեւոր աւաղանաւն 'ի թո-
ղութիւն մեղաց։ Եւ արժանի արա-
ցեր զմեզ հաղորդել սուրբ մարմնոյ
և արեան մեծին քոյ։ Եւ այժմ
աղաչեմք զքեզ տէր՝ արա՛ զմեզ ար-
ժանի ընդունել զսուրբ խորհուրդս
զայս մեզ 'ի մեղաց թողութիւն։ Եւ
զոհութիւն փառաւորել զքեզ ընդ որդ-
ւոյ և սուրբ հոգւոյդ։ Ամէն և՝։

Եւ բարձրացուսցէ ամենեքեան ժողովրդեանն
և ասացէ 'ի Զայն։

Ի սուրբ 'ի սուրբ պատուական մարմ-
նոյ և յարենէ տեառն մերոյ և փրկչին
յիսուսի քրիստոսի։
Ճաշակեսցուք սրբութիւն որ ի՛ջեալ
'ի յերկնից բաշխի 'ի միջի մերում։
Սա՛ է կեանք, Յոյս, Յարութիւն,
Բաւութիւն, և թողութիւն մեղաց։
Սաղմոս ասացէք տեառն աստու-
ծոյ մերոյ։
Սաղմոս ասացէք երկնաւոր թա-
գաւորին մերում անմահի, որ նստի
'ի կառս քերովբէականս։

Սարկաւագն ձայնեսցէ։
Սաղմոս ասացէք տեառն ՝ոյ մերում։

Եւ դպիրքն եղանակեսցեն։
Քրիստոս պատարագեալ բաշխի
'ի միջի։

Մինչ նոքա երգեն, քահանայն առցէ զմար-
մինն 'ի ձեռն, և համբուրեսցէ արտասուք
ասելով։

Ո՛՛՛

զայս մանաւորեա՛ Ճաշակման երե-
կոյին աշակերտացն, բառնալով
զխաւար մեղաց. մի՛ հայիր յանար-
ժանութիւնս իմ. և մի՛ արկեցես
զշնորհս հոգւոյդ սրբոյ։

Ա.յլ ըստ անբաւ մարդասիրու-
թեան քում, պարգեւեա՛ զսա՛ քա-
ւիչ մեղաց, լուծիչ յանցանաց։ Որ-
պէս խոստացաւ և ասաց տէրն մեր
յիսուս քրիստոս թէ՝ ամենայն որ
ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն
իմ, կեցցէ՝ ի յաւիտեան։

Ա.րդ՝ արա՛ զսա՛ մեզ՝ ի քաւութիւն,
զի որք կերիցեն և արբցեն՝ ի սմանէ,
հանցեն զօրհնութիւն և զփառս հօր և
որդւոյ և հոգւոյդ սրբոյ։ Ա.յժմ և՝։

Խաղաղութիւն ամենեցուն։

Զոհանամ զքէն քրիստոս Թագաւ-
որ, որ արժանի արարեր զանար-
ժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ և
արեան քոյ։ Նո՛ այժմ աղաչեմ
զքեզ մի՛ լցի սա՛ լինճ՝ ի դատա-
պարտութիւն, այլ՝ ի քաւութիւն
և՝ ի թողութիւն մեղաց. առողջու-
թիւն հոգւոյ և մարմնոյ. և՝ ի կա-
տարումն ամենայն գործոց առաքի-
նութեան։ Որպէս զի սրբեսցէ սա՛
զշունչս իմ. և զհոգի և զմարմին իմ։
Նո՛ արասցէ զիս տաճար և բնա-
կարան ամենասուրբ երրորդութեդ։
Զի ընդ սուրբս քո՛ արժանի եղէց
փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ
սուրբ հոգւոյդ։ Ա.յժմ և՝։

Յ.ՀԱՆՆՈՒ ՊԱՏԱՐԱԳԱՅԻՆ ԱՍԱՑԵԱԼ ԱՂՕԹՔ։

Զոհանամ և մեծացուցանեմ և
փառաւորեմ զքեզ տէր աստուած
իմ, զի զիս զանարժանս արժանա-
ցուցեր յաւուր յայսմիկ հաղոր-
դակից լինել աստուածային և սոս-
կալի խորհրդոյ քում, անարատ
մարմնոյդ և պատուական արեանդ։
Վասն այսորիկ զսա՛ ի բարեխօսու-
թիւն ունելով, աղաչեմ յամենայն
աւուրս և՝ ի ժամանակս կենաց իմոց
ընդ սրբութեան քոյ պահեա՛ զիս։
Որպէս զի յիշելով զբարեգթու-
թիւնս քո՛ և կենդանի եղէց ընդ
քեզ։ Որ վասն մեր չարչարեցար
և մեռար և յարեար։ մի՛ մերձեսցի
տէր իմ և աստուած՝ խորտակիչն,
կնքելով անձին իմոյ պատուական
արեամբդ քով։ Ա՛մենակարող մաք-
րեա՛ զիս սրբոք յամենայն մեռելոտի
դրծոց իմոց, որ միայնդ ես անմեղ։
Ամրացո՛ զկեանս իմ տէր, յամե-
նայն վտանգութենէ. և զպատերազ-
մողն իմ դարձո՛ յինէն յետս, պատ-
կառեալ և ամաչեցեալ որչափ
յառնէ

յառնէ 'ի մեռելոց իմ։ Ամէնայն ըղ-
գնացս մտաց և լեզուի իմոյ, և զա-
մենայն ճանապարհս մարմնոյ իմոյ։
Լէր հանապազորդ ընդիս, ըստ ան-
սուտ խոստմանց քոց, թէ որ ուտէ
զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ,
նա յիս բնակիցի և ես 'ի նմա։
Դու ասացեր մարդասէր, կացո՛
զբանս աստուածային անլուծանելի
հրամանաց քոց։ Բանիւ դու ես
աստուած ողորմութեան, և զթու-
թեան և մարդասիրութեան և պար-
գևիչ ամենայն բարեաց։ Եւ քեզ վա-
յելէ փառք հանդերձ հարցդ և ամ-
ենասուրբ հոգւովդ։ Ամա՛ն և միշտ
և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Եւ ապա ահառնագրեսցէ զնիզն։ և խընդ-
բեսցէ 'ի ձեռնարանն աստուծոյ զպէս պէս
հայցուածս անձին իւրոյ, և ժողովրդեան,
և աշխարհի, և թողութիւն խնդրեսցէ իւրոց
յանցաւորացն, թշնամեաց և ատելեացն։
Եւ անդէն ահիւ և դողութեամբ ճաշակեսցէ
'ի մարմնոյն, և արբցէ 'ի բաժակէն ասելով։

Հաւատով հաւատամ յամենա-
սուրբ երրորդութիւնդ 'ի հայր և
յորդի և 'ի հոգիդ սուրբ։
Հաւատով ճաշակեմ զսուրբ և
զկենդանարար և զկիսկատարած մար-
մինս քո՝ քրիստոս աստուած իմ
յիսուս 'ի թողութիւն մեղաց իմոց։
Հաւատով ըմպեմ զսրբարար և
զմաքրիչ արիւնս քո՝ քրիստոս աստ-



ված իմ յիսուս 'ի թողութիւն մեղաց իմոց։
Արարին քո՝ անապական լցցի ինձ
'ի կեանս։ Եւ սուրբ արիւն քո՝ 'ի
քաւութիւն և 'ի թողութիւն մեղաց։

Եւ սարկաւագն հաղորդեսցի։ և յետ հաղոր-
դելոյն դոցէ առ ժողովուրդն և ասէ բարձր։

Երկիւղիւ և հաւատով յառաջ
մատիք։

Եւ դպիրքն բարձր ձայնիւ։

Ընդ մեր և տէր մեր երեւեցաւ։

Եւ հաղորդեսցի նոր ձեռնադրեալն բայց
ոչ 'ի բերանն, այլ յտին տալով զրբութ-
թիւնն։ և ամենայն արժանաւորքն հաղոր-
դեսցին։ և յետ հաղորդելոյն խաչակնքեսցէ
զժողովուրդն ընծայիւն և ասասցէ։

Կեցո՛ տէր զժողովուրդս քո՝ և օրհ-
նեա՛ զժառանգութիւնս քո՝։ Հով-
սեա՛ և բարձրացո՛ զսոսա՛ յայսմ
հետէ մինչև յաւիտեան։

Եւ դպիրքն երգեսցեն։

Լցաք 'ի բարութեանց քոց տէր
ճաշակելով։

Քահանայն ասասցէ 'ի ծածուկ։

Զոհանամք զքէն հայր ամենակալ
որ պատրաստեցեր մեզ նաւահան-
դիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբ-
բութեան ուր փառաբանի անուն
սուրբ երրորդութեանդ։

Ամէն։

Զոհա-

Զոհանամք զքէն քրիստոս Թագաւոր՝ որ պարգեւեցեր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբ քով որբով։ Շնորհեա զքաւութիւն և զմեծ զողորմութիւն։

Ալելուիա։

Զոհանամք զքէն հոգւոյ Աշխարհս՝ որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի։ Ընդարձակ պահեա հաւատով երկրագութեանդ յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Ալելուիա։

Սարկաւագն

Եւ եւս խաղաղութիւն զտեր աղա՛։ Եւ եւս հաւատով ընկալեալք ուծա՛։

Դպիրքն։

Զոհանամք զքէն տէր որ կեր՛։

Քահանայն ասացէ՛ ի Ծառամուկ։

Զոհանամք զքէն քրիստոս աստուած մեր որ զայսպիսի Հաշտարարութիւն բարձրութեան շնորհեցեր մեզ ՝ի սրբութիւն կենդանութեան։ Սովորեալ պահեա զմեզ սուրբս և անարատս, բնակեալ զմեզ քո՝ աստուածային լնանմոքդ։ Հովանեա զմեզ յանդգնութեան կամաց քոց սրբոց և բարեսիրաց։ Որով ամբարձեալք յամենայն բանսարկութեան ընդդիմութեանց, քում և եթ արժանի եղիցուք լսել ձայնի։ Եւ քեզ փայլոյ քաջալերեալ և Հրամարեալ հովանի հեանալ։ Եւ առ՝ի քէն ընդունել զպատգամաւոր տեղի յարքայութեանդ երկնից։

Ընդ մեր և տէր մեր և փրկիչ յիսուս քրիստոս։ Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սուրբ հոգւոյդ։ Այժմ՝։

Խաղաղութիւն ամենեցուն։

Ընդունիս, անհաս, երբեակ լինքնութեանդ, հաստիչ, ընդունող, և անբաժանելի, միանական սուրբ երրորդութեանդ վայելեալ փառք իշխա՛։

Եւ ապա ասցէ զաւետարանն սուրբ՝ ի ձեռն իւր։ Եւ երիցս երկրպագեալ համբուրեսցէ զսուրբ սեղանն։ Եւ լքանելով՝ ի մէջ եկեղեցւոյ ասասցէ զաղօթս՝ ի Ձայն։

Որ օրհնես զայնոսիկ՝ որք օրհնեն զքեզ տէր՝ և սուրբ առնես զյաւասցեալս՝ ի քեզ։ Կեցո՛ զժողովուրդս քո՛ և օրհնեա՛ զժառանգութիւնս քո՛։ Զլրութիւն եկեղեցւոյ քոյ պահեա՛։ Սրբեա՛ զսուսա՝ որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ։ Դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով։ և մի թողուր զյաւասցեալս՝ ի քեզ։

Զ Խաղաղութիւն պարգեւեա՛ ամենայն աշխարհի։ Եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց, քրիստոնէից

և զենուորեալ մանկանց նոցա, և ամենայն ժողովրդեանս։ Զի ամենայն տուքք բարիք, և ամենայն պարգեւք կատարեալք, 'ի վերուստ են իջեալք առ 'ի քէն։

Որ ես հայր լուսոյ և քեզ վայելէ փառք իշխանութիւն և"։

Եւ դպիրքն ասացին երիցս։

Աղեցի անուն սեռառն օրհնեալ։

Եւ քահանայն դարձցի առ ժողովուրդն և ասացէ 'ի Զայն։

Կատարումն օրինաց և մարգարէից դու ես քրիստոս ահա վերկէ մեր։

Որ լեր զամենայն հայրական անօրինութիւնս քո։

Լիցս և զմեզ հոգւովդ քով սրբով։

Սարկաւագն։

Օրթի։

Քահանայն։

Խաղաղութիւն ամենեցուն։

Դպիրքն։

Եւ ընդ հոգւոյդ քում։

Սարկաւագն։

Երկիւղածութեամբ լուարուք։

Քահանայն։

Սրբոյ աւետարանիս որ ըստ Յովհաննու։

Ի հօրէ լուսոյ։

Իսկզբանէ էր բանն։ և բանն էր առ աստուած և աստուած էր բանն։ Նա էր 'ի սկզբանէ առ աստուած։

Ամենայն ինչ նովաւ եղեւ և առանց նորա եղեւ և ոչ ինչ որ ինչ եղեւն։ Նովաւ կեանք էր։ և կեանքն էր լոյս մարդկան։ Եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորի։ և խաւար նմա ոչ եղեւ հասու։ Եղեւ այր մի առաքեալ յաստուծոյ՝ անուն նմա յովհաննէս։ Սա եկն 'ի վկայութիւն զի վկայեսցէ վասն լուսոյն։ զի ամենեքին հաւատասցեն նովաւ։ Ոչ էր նա լոյսն այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Էր լոյսն ճշմարիտ որ լուսաւոր առնէ զամ մարդ որ գալոց է յաշխարհ։ Յաշխարհի էր։ և աշխարհ նովաւ եղեւ և աշխարհ զնա ոչ ծանեաւ։ Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան։ Իսկ որք ընկալանն զնա ետ նոցա իշխանութիւն որդիս աստուծոյ լինել։ որոց հաւատասցեն յանուն նորա։ Որք ոչ յարենէ, և ոչ 'ի կամաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն այլ յաստուծոյ ծնան։ Եւ բանն մարմին եղեւ և բնակեցաւ 'ի մեզ։ Եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիածնի առ 'ի հօրէ լի շնորհօք և ճշմարտութեամբ։

Սարկաւագն։

Սուրբ խաչիս աղաչեսցուք զտէր։

Քահանայն։

Պահպանեա զմեզ քրիստոս ահ։

Սար-

Սարկաւագն։

Օրհնեցից զտէր յամենայն ժամ։

Եւ քահանայն խաչակնքեսցէ զժողովուրդն և ասասցէ բարձր։

Օրհնեալք եղերուք 'ի շնորհայ սուրբ Հոգւոյն։ երթայք խաղաղութեամբ։ և տէր եղիցի ընդ ամենեսեանդ։

Եւ դպիրքն ասասցեն։

Ի տէր պարծեսցի անձն իմ"։

Եւ ընդ սաղմոսելն դպրաց բաշխեսցի նշխար։ Եւ յաւարտմանն քահանայն դարձցի յաբեւելս և երկրպագեսցէ առաջի սրբոյ սեղանայն երիցս և ասասցէ։

ՏԻՐ յիսուս քրիստոս աստուած ողորմեա՛ մեզ։

Եւ մտեալ յաւանդատունն մերկասցի 'ի զգեստուցն։ և երթիցէ խաղաղութեամբ։

ԱՆԵՐՁ։

# ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Շնորհք ամենասուրբ երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ 'ի 25-ն յունիսի 1860 ամի աւարտեցաւ տպագրութիւն այսր խորհրդատետր անուանեալ սուրբ մատենիս, որում 'ի ձեռն սրբազան քահանայիս Աստուածային կատարի խորհուրդ։ Ասաի վերատեսուչ տպարանիս աղաչէ զհոգեւոր և զսրբազան Հարսդ 'ի ստանալն և 'ի գործածելն զայս խորհրդատետր, յիշել 'ի սուրբ աղթս Ձեր զՏէրնիսայ քաղաքացի Օշլիրեանն Խաչատրեանց և զամուսնն նորա Նիկոմիայն, զուստերս և զդստերս նորա և զամենայն մերձաւորս նորին, և ընդ նոսին յիշել զհոգիս հանգուցեալ ծնողաց նորա Պետրոսի և Քալինի հանդերձ ամենայն ննջեցելովք։ որ իւրովք ինքնայօժար կամաք նուիրեաց յօգուտ որդեգրայ Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Տէրնիսայ զամենայն ծախս տպագրութեան այսր խորհրդատետրի։

2dn

2747

«Ազգային գրադարան»
NL0029615